

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիգրաֆիկ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ
հարմար) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
«Ինտերկալի» 2.60 տր. վեցամսեայ 1.50
ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով
ИПРАВНОУЧНИКЪ «ИРМОУЧНИКЪ» ЛРВУРОБ. — ՎՍԻՆԱ (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„ИРАВУНКЪ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խնայարարեալ ուղղեալ գրութիւն/
եւ չեն դրկուիլ եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին առ-
բողոքովի կամ մասամբ:
Մանուցման տողը 20 սանթիմ. երե-
ւեմ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Անահիտի խմբագիր-անօրէն Տ.
Ա. Զօպանեան իր փոփոխութիւն թի-
ւին մէջ բազմաթիւ սխալներ զո-
հած է Արփիար Արփիարեանը իր
էութեամբը պատկերացնելու հա-
մար:

Զօպանեան կրէ Արփիարի հա-
մար:

«Հեզնոյ մըն էր ան, գեղարուեստը
կատէր, գրականութեան մէջ «օգտա-
կար միայն կը փնտռէր, ազգային
կեանքը իրեն համար ամբողջ կեանքն
էր...»

Քիչ մը վարը՝

«Շատ աշխատեց շատ միակողմա-
նի ու հապճեպ զարգացում ունեցող
մարդ մը, չանկան ու վառվառն
բայց էականապէս թեթեւ ու չար
խառնուածք մը, ահա ինչպէս կը ներ-
կայանայ ինծի Արփիարեան տասը
տարեան յիշատակներու մէջէն»:

Յետոյ խել մը պարտազաններ
պատմելէ և Արփիարին «անձնա-
կան ատելութենէ մզուող, ձգտում
և անձեր «կեցիլ» փափաք վերա-
գրելէ վերջ կուգայ անոր դաւա-
ճան մը չըլլալու խնդրոյն հետեւ-
եալ բացատրութիւնները տալ,
զոր մեր շատ մը ընթերցողները
հետաքրքրող պարագայ մը նկա-
տելով, նոյնութեամբ կարտատը-
պենք:

«Մատնիչի խնդրոյն զլխաւոր
հեղինակներէն մին և անոր ամե-
նէն եռանդուն տարածիչը Հրանդն
էր. եւ ասի, ինծի համար, բա-
ւական էր որ կասկած ունենայի
այդ ամբաստանութեան լրջութեան
ը վրայ, որովհետեւ առիթ ունե-
ցած էի շատ մօտէն ճանչնալու
«Հրանդ»ին նկարագիրը: «Ծաղիկը
հիմնած ատենն խոստացած էր աշ-
խատակցիլ երբ առաջին թիւը
պատրաստելու վրայ էի, չկատա-
րեց իր խոստումը. յետոյ, ամբ-
նայով իր կեդրոնականի աշակերտ
ներէն որոնք «Ծաղիկ»ը կեդրոնա-
կանի թերթը կը նկատէին, ըս-

տիպուեցաւ յօգուած մը բերել,
ստիպուեցաւ վրայ սգորմիւր բան
մը, զոր պիտի չհրատարակէի ե-
թէ սկսնակէ մը ստորագրուած ըլ-
լար. այդ յօգուածին հրատարա-
կուէն յետոյ, երեւակայեալ էր որ
«Ծաղիկ»ը մէկ քանի հա-
րիւր նոր բաժանորդ ունեցած ըլ-
լալու էր և շարունակ երեք անգամ
կուգար «Ծաղիկ»ի խմբագրատու-
նը ինքզինքը ճաշի հրաւիրելու,
Յետոյ, օր մըն ալ կեդրոնականին
մէջ ինծի յայտնեց որ իմ աշխա-
տակցութիւնը այն ատեն միայն
պիտի կարենար շարունակել «Ծա-
ղիկ»ին երբ յօժարէի ընդունիլ
պայման մը զոր կ'առաջարկէր,
այն է «Ծաղիկ»ը «Հայրենիք»ի
դէմ պայքարի թերթ մը դարձնել,
երեքը չի պիտի մոռնամ այդ գոհ
հիկ ու ծիծաղելի մարդուկին հետ
այդ օրը ունեցած տեսարանը:
«Հայրենիք»ով փարա՛կը վաստակին
կ'ը, կը կոչէր կառ-կարմիր եղած,
ահագին փարա՛կը վաստակին կոր
ու Սթանտորտին մէջ կ'ուտեն կոր,
ու մեզի չեն ի տար կոր. յարձա-
կինք իրենց վրայ, կ'տրեմք այդ
թերթին վարկը որ խախտած է
արդէն, «Ծաղիկ»ը «Հայրենիք»ին
տեղը պիտի բռնէ, և հաղարաւոր
բաժանորդներ պիտի ունենանք,
բոլոր Դաշնակցականները մեզի
հետ պիտի ըլլան...»

Եթէ պայման ընդունին, կը պըն-
դէր, մէկ քանի հզօր աշխատակից
ներ կը բերեմ քեզի, աշխատակից
ներ որոնք իմ մէկ խօսքիս կը սպա-
սեն «Ծաղիկ»ին նկատմամբ իրենց
ընթացքը վճռելու համար. այդ
հզօր աշխատակիցներէն մէկը Օ-
գիմքան էր... Եւ թուղթ մը
ձեռքը բռնած, կը պաղատէր, կը
ստիպէր, կը սպառնար, «քօնթրաթ
մը, կաղաղակէր, քօնթրաթ ընենք
հոս, առանց վարկեան մը կ'որոշն-
ցնելու»: Ս'երժեցի այդ աղտոտ
հաշիւին մարդը ըլլալ, ըսի իրեն
որ «Ծաղիկ»ը դրամ վաստակելու
համար չէի հիմնած և յայտնեցի
իրեն որ կը նախընտրէի վազ անց
նիլ իր հրաշագործ աշխատակցու-
թենէն: Այդ օրէն մէկ կամ երկու
ամիս յետոյ էր որ մատնիչի պատ-
մութիւնը մէջտեղ նետուեցաւ:

Այդ խնդրոյն ծագումէն տակաւին
վեց ամիս առաջ Հրանդ երկու երեք
անգամ գծաւած էր Արփիարեանի
հետ՝ բոլորովին անձնական ճշգրիտ
վէճերու պատճառով և յետոյ դարձ-
եալ եկած էր «Հայրենիք»ին աշ-
խատակցիլ. նոյնիսկ այն միջոցին
ուր ինծի կ'առաջարկէր «Ծաղիկ»
ին մէջ «Հայրենիք»ին դէմ պատե-
րազմ յայտարարել, կապերը չէր
խզած «Հայրենիք»ի խմբագրու-
թեան հետ. վերջին պահուն, վեր-
ջին վէճ մը ունեցած էր Արփիար-
եանի հետ, լղրճուկ խնդրոյ մը
առթիւ. Հրանդ կ'ուզէր որ «Հայ-
րենիք»ին մէջ ազգը ապին Սի-
ֆիլիպի մասին գրքովի մը որուն
հեղինակն էր Թիւթիւնճիֆ լրբ-
տեալ: Արփիարեան մերժած էր
հրատարակել լրտեսի մը ազգը-
ատկից շարք մը յետոյ, Հրանդ
զրոյց հանց թէ Թիւթիւնճիֆին
միջոցով ձեռք ձգած է Արփիար-
եանի հարցաքննութեան թղթերը
որոնք կ'ապացուցանէին թէ Արփի-
արեան մատնած ըլլալ վ. Տատեա-
նը, Տր. Թիւրեքաններ, ևն. Եւ
ասիկա բաւեց որպէսզի մեր հո-
ւարակութիւնը ամենաստուար
մեծամտութեամբ հաւատը ընծա-
լէր այս քառմանի ամբաստանու-
թեան: Բոլոր Դաշնակցականները,
եւ անոնց հետ բոլոր տիրացունե-
րը, էֆէնտները, միմտները,
որոնք Արփիարեանի խայթցը
կրած էին, եւ ուրիշներ ալ որոնք
Արփիարեանի անախորժ ու քիչ
մը զգէցէն ընաւորութիւնը մօտէն
ճանչցած ու անկից վերաւորուած
էին, ամբաստանութեանը ամբա-
ցումին ուժ տուին. եւ այդ միջո-
ցին «Ծաղիկ»ով ու կեդրոնականի
դասերով զբաղած, շատ քիչ ան-
գամ կ'երթայի «Հայրենիք»ի խմ-
բագրատունը, այն ալ գրէթէ մի
միայն Շահնազարն ու Բաշալիանը
տեսնելու համար: Արփիարեանի
հետ ճիշդ այդ օրերը հրապարա-
կային հակաճառութիւն մըն ալ
ունեցած էի Նարեկացիի խնդրոյ
մը առթիւ. իրեն հետ յարաբե-
րութիւններու բոլորովին պաղ էին:
Եւրոպայի իմացայ զրոյցը որ
կը ձգտէր մրտել Արփիարեանը,
զրուանքով բողոքեցի զայն հրա-

պարակ հանդիմանում դէմ: Հակա-
ռակ իր բոլոր թերութիւններուն
այդ մարդը մեր մէջ ամենէն նշա-
նակալից դերերէն մէկը կատարած
էր. Միացեալ ընկերութեանց
զլխաւոր հիմնադիրներէն մէկը եւ
«Մշակ»ի «Հայկակ»ը եղած էր,
երեսփոխանական ժողովին մէջ է-
ֆէնտներու կուսակցութեան դէմ
յանդուգն պայքար մը մղած էր,
«Արեւելք»ի և «Մասիս»ի իր յօ-
ւածներովը մեր մամուլը և մեր
գրականութիւնը վերանորոգոյնե-
րէն մէկն եղած էր, եւ Շահնազա-
րին հետ հիմնողն եղած էր «Հայ-
րենիք»ին, անհուն ցաւ մը զգացի
երբ տեսայ որ մեր ժողովուրդը,
աններելի դիւրահաւանութեամբ
մը, բնական կը գտնէր որ քան
տարի իր բացարձակ համակրանքը
փայլած ու այս բոլոր գործունէ-
ութիւնը կատարած մարդ մը գի-
տակից գաւաճան մը, վարձուած
լրտես մը կրնար ըլլալ. ցաւ զգա-
ցի, որովհետեւ մոտենցի թէ մեր
ժողովուրդը խորապէս անբարոյա-
կանացած ըլլալու էր ուրեմն՝ քա-
նի որ իր ամենէն սիրուած գոր-
ծիչներէն մէկուն ոճրագործ մը ըլ-
լալուն կարելիութիւնը մէկ օրէն
և առանց գծաւորութեան կ'ընդու-
նէր: Յետոյ, Արփիարեանին ներ-
քին կեանքը գիտէի բաւական, և
ան հերիք էր այդ զրոյցը քան-
դելու համար. ժողովուրդ ու պար-
զուկ կեանք մը կը վարէր, միշտ
թափթփած հազուատներով միշտ
զրպանը պ'որտպ. եւ իր միակ
զուարճութիւնը, միակ հաճոյքը,
միակ կիւրքը իր ազգային գրական
գործունէութիւնն էր. որուն կը
նուիրէր իր բոլոր ժամանակը,
իւնչպէս կարելի էր ասոնք համա-
ձայնեցնել Նազըմ փաշայէն լիցուն
ամսական մը սուրղ լրտեսի մը
հեքեաթին հետ: Եւ վերջապէս,
կէտ մը կար ամենէն աւելի թի-
ւադրական. զրոյցը հանդիմանը
զայն կ'ուղղէին ոչ միայն Արփի-
արեանի անձին դէմ, ալ ամբողջ
«Հայրենիք» լրագրին դէմ, եւ մի
անգամայն ամբողջ Հնչակեան կու-
սակցութեան դէմ: Յայտնապէս
կուսակցական նկատումներ կային
այդ զրոյցին ետեւը, այդ միջոցին

Հնչակեան կուսակցութիւնը միակ ազգայնական ու հոշակաւորն էր ճանկաստանի ինչպէս Եւրոպայի մէջ . եւ մանաւանդ Պոլսոյ մէջ . Պոլսոյ Դաշնակցական գործիչները , մասնաւորապէս Խաւսեան և իր արքանակները , շատոնց իմեր առիթ մը կը ցանկային գտնել այդ կուսակցութիւնը վարկաբեկ ընելու և անոր աւերակներուն վրայ Դաշնակցութիւնը բարձրացնելու համար . Արքայապետ ճարպիկ , հնարամիտ ու ինքն ալ կուսակցամոլ , Պոլսոյ Դաշնակցական վարչները ամենէն աւելի նեղող մարդն էր , միեւնոյն ատեն , «Հայրենիք»-ը , որ աւելի ժողովրդականութիւն գտած և զօրութիւն ստացած էր քան «Դրոշակ»-ն ու նոյն իսկ «Հայկ»-ը «Հայրենիք»-ը որ Դաշնակցութեան հրաման մը ընդունած էր , եւ չէր հպատակած անոր , «Հայրենիք»-ը որ Հնչակեան կուսակցութեան համար ամենակարեւոր յենակէտ մըն էր , կը ձանձրացնէր Դաշնակցականները . աղաքտելով Արքայապետին , կուզէին կործանել նաեւ «Հայրենիք»-ը և Հնչակեան կուսակցութիւնը . Ասոր ճշգրտութիւնը ըմբռնելու համար կը բաւէ նկատել այն յամառ մոլեգնութիւնը զոր Դաշնակցականներն այդ միջոցին դրին (եւ մինչեւ ցարդ կը շարունակեն) Արքայապետին վրայ կեդրոնացնելու «մատնիչ» բառին ամբողջ ծանրութիւնը , Պոլսոյ մէջ նուրբանի պէս ամեն վարկեան իր ազգին դէմ դաւադր սրկկայ մը կար , քէչեանի պէս ուսիկանուած միջոցով իր բոլոր սխրը յագեցնող հրէշ մը կար , (եւ կայ մինչեւ հիմա) վահան վարդապետի պէս չիլ ու փաստապար արարածներ կային , Դաշնակցութիւնը անոնցմով չէր զբաղեր , կամ բոլորովին անցողակի ուշադրութիւն մը կ'ընծայէր անոնց , միակ մատնիչը , Հայոց խնդրոյն լուծման միակ արգելքը , Արքայապետն էր (ու մինչեւ ցարդ միեւնոյն ծիծաղելի կացութիւնն է որ կը տիրէ) .»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

(Կեր մասնաւոր քղաքական)

Սոփիա , 8 մարտ

Ի ժընէվ գաղ. լեզուով հրատարակուող շէֆթը թերթին խմբագիրը Պ. Տանէվ , կիրթ Մակեդոնացի մը , որ եկած է Պուլկարիոյ մի քանի քաղաքներու մէջ Մակեդոնական հարցին վրայ ատենաբանութիւններ ընելու , կիրակի օր իր առաջին ատենաբանութիւնն ըրաւ մայրաքաղաքիս մէջ ի Սլավոնական-Պէտտա ի ներկայութեան թունդ բազմութեան մը . յորում կը գտնուէին թղթակիցներ , ինք բազիրներ , գրագէտներ , հին նախարարներ և սպաններ և ամենէն աւելի բարձրագոյն դպրոցի ուսանողներ և ուրիշ դասակարգի Մակեդոնացիներ :

Պարոնը մեծ եռանդով սկսաւ իր ատենաբանութիւնը և մեծ եռանդով ալ վերջացուց . սակայն նոր գաղափար մը , նոր միջոց մը չյայտնեց այդ կնճառ խնդիրը լուծելու համար , ցարդ ըստածնեւում ու գրումներու կրկնութիւնն էր և ամփոփում մը . այսու հանդերձ պարապն ալ չգնաց , արդէն յուզուած սրտերն աւելի բուրբոքեց ու գրգռեց :

Մ'ը պիտի յանգի խնդիրը - ահա հարցը որու վրայ ամեն խելահաս խորապէս կը խորհի :

Աստիւտ չուզեր լսել Մակեդոնիա բառն անգամ . Ռուսիա տակաւին ժամանակը հասած չէ կրտսէ , թէեւ ղեկիկներն քէյֆի օրոշն . ձա ֆուգարաւնը ձաւնը չըզաւառնը , որո՞ւ հագ և այսօր ալ յայտնապէս հակառակորդ կերելի , ուրկէ օգտուելով Համիտ կը գործէ անանձ և թրքական խժոժութիւններն ու վայրագութիւնները օրումն դէպքերն են դժբաղդեբերին մէջ :

Սերպիա և Պուլկարիա ո'րչափ բարեկամ երեւին , դժուար թէ համաձայնին բան մը ընելու և եթէ համաձայնին ալ , պիտի կըրնան բան մը ընել . խնդիր է , զի իրենց դէմ միայն թուրքը չպիտի ունենան . Գարատաղ խառնուկութեան մը կըսպասէ Սերպիոյ մէջ իր ձգտումներն առաջ տանելու համար , Ռուսիան ալ ոչքերը չորս բացած կուզէ Պուլկարը խառնաչփութեան մէջ տեսնել , որ զը բաւէ Սերիպիէ , Տօպրիչ , Վառնա ևն . Թոյն ալ — թէեւ անոր խօսքը չըլլար — ըստ ամենայն հաւանականութեան Տաճկին կողմը պիտի բռնէ Պուլկարն ու Սերպը ջախջախելու համար :

Մակեդոնացիք , որ իրենց բոլոր յոյս դրած էին Պուլկարիոյ և Ռուսիոյ վրայ , այսօր իրենց դէմ ունին այդ երկուքն ալ . ցաւին մեծը Պուլկարիայէն է , որ զինուորական օգնութեան մը յոյս չտալէն զատ Պուլկարիոյ մէջ իսկ սկսած է արգելքներ յարուցանել անոնց ազգային ձգտումներուն դէմ , որ իրենցն ալ է — զի ո'վ են Մակեդոնացիք , ո'չ ապաքէն Պուլկարներ — , որով Մակեդոնացին կապուած կաշկանդուած , որ կողմ որ դառնայ փոշեր կը ծակծկեն միմեծ :

Եւ չեմ կարծեր , որ Մակեդոնիոյ հարցը խզելու դիտում մը կենայ , զի այս ալ աշխարհիս աւերակելի և աններելի ոճիրներէն մէկը պիտի ըլլայ . ընդհակառակը վաղ թէ անագան Ռուսիա և Պուլկարիա պիտի լուծեն այդ հանգոյցը , պիտի ազատուի մեզի չափ դժբաղդ ու հալածուած այդ ժողովուրդը :

Սակայն թէ ինչ գաղտնիք կայ ինչ են պատճառներ , որ գործն մէկէն ի մէկ այս վիճակ առաւ և թէ երբ դարձեալ Մակեդոնիոյ նպաստաւոր հանգամանք մը պի-

տի առնուն , յաւակնութիւն չունիմ գուշակութիւններ ընելու , զի գիտեմ թէ քաղաքագէտ չեմ , սակայն կէտ մը կայ որի վրայ «Իրաւունք»-ի ընթերցողաց ուշադրութիւնը կը խնդրեմ :

— Մակեդոնացին , որ կաշխատի այսօր իւր երկրին ազատութեան , ինքզինք կը նկատէ պուլկար Սլավոն և Օրթոդոքս , որով Պուլկարի ոյ և Սլավոն ցեղին ու աշխարհիս զօրաւորագոյն տէրութիւններէն իրաւոյ հետ ալ կապուած ցեղաւորին ազգային և կրօնական կապեւրով ու այս երկու տէրութիւնք ալ չեն ուզեր արդի պարագային մէջ Մակեդոնական այն է իրենց եղբայրց ազատութեան հարցը յուզել և ընդհակառակը կ'աշխատին որ և է միջցաւ , որ արդէն գտնուած յուշումը մեղմացնեն և անտարբեր կը դառնան թուրքին հանդէպ , պիտի թողաւորէ՞ արդեօք Պուլկարիա մեզ ազգային Յեղափոխական որ և է յայտնի անմեղ շարժում մ'իսկ , որ մեծ թուրքին Սլովիան Համիտին իր մեծ պաշտպան Վիլլէլմին կ'աւելի բարձրաշնորհ բարեկամաց թուր չգայ :

Իրաւ է ազատ և սահմանադրական Պուլկարիոյ մէջ կ'ապրինք և մենք ինչ կ'ենենք արդէն կամ ինչ կ'ընենք ընել , ոչինչ : Այլ զգուշութիւնը միշտ խելացութիւն է , որ մի գուցէ Պուլկարիան այնեղ գայ մեզ օրէնք ի ձեռքս առաւելորդաց եմ :

Քաղաքիս հայոց եկեղեցին որ փետր . 14 էն ի վեր գոց էր քահանայի մը մէկ աններելի ընթացքին հետեւած , ամսոյս 5 էն վերաբացուեցաւ , զի Գեր. այցելու հովիւը վերջապէս կրցաւ զրկել մեզ քահանայ մը , Արթ . Տէր Թ. վակիմ քահանայն :

ՀՈՒՆՏԱՅԻ ՎԻՆԵՄԻՆԱ
ԹԱԳՈՒՅԻՆ ՀԱՅ ՍԵՐՈՒՆԴԷ
2000 ՏԱՐԻ ԱՌԵԶ

Յետագայ տեսութիւնը թարգմանուած է Գիւլիստէֆիա (Մ. Ամերիկայի հրատարակուող «Ինքնիկ Պրիմէն»-ի ներկայ տարւոյ քիտր . 7-ի թիւէն) :

Հոլանտայի վիլհելմինա թագուհին որ Օտանձ Նասաուի ընտանեկան անունը կը կրէ , եթէ պատմութեան վրայ յետադարձ ակնարկ մը նետէ , հոն պիտի պատահի վիլհամ Օտանձի անունին , որ միեւնոյն ժամանակ Հոլանտայի մէջ ծանօթ է վիլհամ Լուսինաց անունով :

Վիլհամ Լուսինաց յաջորդաբար զբաղած է իր իշխանութեան օրերուն , Սպանիացիները Հոլանտայէն դուրս վճռաւորով , յետոյ երկիրը յարագէպ ողողումներէ ազատելու համար համալուար թուրքերը շինելով և Լուի . Ռ. Գի. արշաւանքներուն դիմագրելով :

Սակայն ներկայ թագուհին ուղղակի չսերիք վիլհամ Լուսինացէն հապա անոր ազգական մէկ ճիւղէն . ինքը մօր կողմէ կը պատկանի Օտանձի տան , իսկ հօր կողմանէ Նասաուի կոմսական ընտանիքին որ միացած են Նասաուի կոմս Հէնրիի և Շալօնի Քլօդ Օ. անձին ամուսնութեամբ 1530ին . իսկ եթէ Հոլանտայի պատմութիւնը թղթաւորով 1000 տարի ետ երթանք , այսինքն մինչեւ խաչակրութեան շրջանը , հոն՝ այդ պատմական մեծ արշաւանքին ժամանակ համալուար դարձած Սլովիոյ թագաւոր Ռիչարդ Արիւմին և Ֆրանսայի թագաւոր Ուրբէն Լուիի հետ նշանաւոր դէպք մալ պիտի գտնենք կիլիյոմ տէ Պոլսոյ Պալլին կուսը Օտանձի :

Կիլիյոմ տէ Պոլսոյ , խիստ նշանաւոր պատերազմիկ մը եղած է , ինքը պատերազմական նշանաւոր ըլլած էր հետեւեալը «Պաղտասար» բաղդը ուր որ կը տանի» որ ստեղծագործած է մանաւանդ Պաղտասարի նի գաշտերը :

Թէ ինչու կիլիյոմ տէ Պոլսոյ պէս կը պոռար , վիլհելմինա թագուհին հասկնալու համար ասիկա 1100 տարի ետ ետ երթալով պէտք է Աստուածաշունչը թղթաւորէ , որ պիտի տեսնայ Արեւելքէն երեք իմաստուն մոգերու պայծառ աստղէ մը առաջնորդուած , Բէթլէհէմ գալը . որոնց աստղաբաշխական հմտութիւնը իրենց գուշակիլ տուաւ թէ հրէից թագաւորը ծնած պէտք է ըլլար : Աւանդաբար կը պատմուի թէ տար երեք իմաստուններէն մին հայոց թագաւորն էր և Պաղտասար անունով . Պաղտասար իր արքայական նուէրները Մանուկ փրկին ոտքը դնելէն և զայն ու անոր մայրը հերոզդէսի ձեռքէն փրկելէն յետոյ վերադարձաւ Հայաստան , Պաղտասարի անդրանիկ որդին Քրիստոսի խաչելութեան թուականին մեկնեցաւ դէպի Ալպան լեռներու կողմի երկրները , ու հոն շինեց դղիակ մը և դարձաւ բռնակալ Պարոն մը :

Այս պարոնին սերունդը մինչեւ 12րդ դար հոն բնակեցաւ եւ իր վերջինը կիլիյոմ տը Պոլսոյ Պալլին . ներք թողով եկաւ արդի Ֆրանսայի հողին վրայ և շինեց Օտանձի դղեակը . Ահա այս էր պատճառը որ կիլիյոմ տը Պոլսոյ «Պաղտասար» բաղդը ուր որ կը տանի» կը պատարաւորվին մէջ ինչպէս շատ անգամներ պոռացած է Սլովիոյն Սլովիանի դէմ :

Այսպէս վիլհելմինա իր նախահայրերու շարքին մէջ կուենայ Պաղտասար հայ արքային շատաւելիներէն կիլիյոմ տը Պոլսոյ որուն արիւնն ալ կրիւնն անշուշտ կը կը պարծենայ :

ԱՍՏՈՒՆ ՀԱՅՈՒՆԵՐԻՆ

ՏԻՎ . ՈՐԲ . ԲՆԻՄԵՐՈՒԹԵԱՆ Փ . ՊԻՍՏՅԱՆ
Հաւերացեալ տղայս քաղաքիս խորհրդայ կողմանէ

— 0 —
ՊԱՐՏԻ
1900 մարտ 1 նոր իրաւունքութիւն գործադիր ժողովոյ անդամներէն

Ընկալագրերու փոխարէն	77
Գրական ծախքերու	15
Զանազաններէ	51. 35

ԲԱՃԱՆԴԻՆՆԵՐԷ ԳՈՅԱՑԱՄ

Մարտի ամսալիցաներէ	158. 90
Ապրիլի »	138. 95
Մայիսի »	129. 15
Յունիսի »	117. 25
Յուլիսի »	112. 70
Օգոստոսի »	111. 30
Սեպտեմբրի »	110. 25
Հոկտեմբրի »	108. 15
Նոյեմբրի »	110. 25
Դեկտեմբրի »	110. 25
Գումար (901) »	109. 90
Փետրվարի »	109. 55

Մարտ 1 ընկալագրերու վը	102. —
ճարուած (12, 000)	20. —
Գրական ծախք	122. —

Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարան	
ընկալագրերու համաձայն	
Մայիս 2 օտ. լիւր. 12	308. —
Սեպտ. 14 » » 12 (էջ 25. 55)	306. 60
Դեկտ. 7 » » 12 (» 26. —)	312. —
Փետր. 22 » » 12 (» 26. —)	416. —

	1342. 60
	122. —

Նորընտր վարչութեան յանձնաժողով	105. 35
ձեռք հաշիւներ	1559. 95

Ի զիմաց Տիկնանց Որբախնամ ընկերութեան	
Առեւտրային Առեւտրային	
Փ. ՀԱՅԿԱՆՔԱՆ Կ. Պ. ԱՍՏԱՐԱՆԵԱՆ	
Գանձապետ	
Ն. ԷԳՆԱՆԵԱՆ	
Փ. Պոլիս, 1 մարտ 1901	

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Կը խնդրեմ որ հետեւեալը անփութօք
փոխ հրատարակել համարիս
Անցեալ ուրբաթ երեկոյ ժամը 8ին

տուն վերադարձած ատենս, փողոցին մէջ պահու ըստեւս եւ կեանքս վնասելու մտօք բերեալով վրաս յարձակող երկու հոգիներ, թշնամիներէս զբոցեալ, իրենց նպատակին չկրնալով հասնիլ, հիմա ալ սկսած են թէ Հայ եւ թէ Պուլկար հասարակութեան մէջ անուան շուրջը ազդեցականութիւններ ընել. իբր թէ ես, թուրք կոտորածներէս լրտես եղած ըլլամ եւ այդ պատճառաւ զիս սպաննել ուզած ըլլան: Այսպէսով կուզեն իրենց անուանակիր արարքը արդարացեալ ժողովրդեան առջեւ:

Անցեալ շաբաթուն ծանօթ է, ինչպէս նաեւ երկար ամիսներ կրած բանտարկութիւնս եւ 10 տարուան տաժանակիր աշխատութեանս զատապարտութիւն Պոլիս, լոկ ազգիս եւ նման ներուս հանգէպ պարտքս կատարել ուզած ըլլալուս համար:

Ինչ հետ բանտակից եղող ազգայինք, որոնցմէ բաւական թուով ալ կը գտնուին Պուլկարի մէջ, կրնան խոստովանիլ, նոյն իսկ բանտարկութեանս շրջանին մէջ ալ բանտակից ազգակիցներու օգտակար ըլլալու ջանքերս:

Արդ ներկայիս կը յայտարարեմ մտքիս մէջ միայն գոյն ծերութեանս թշնամիներու թէ, եթէ անկեղծ ու բանիմաց ազգայնէրներ են, թող մէջտեղ հանեն տմենաշնչին փաստ մը իմ լրտես ըլլալուս մասին, հրապարակ զան եւ ապացոյցանեն: Հակառակ պարագային իրենց այդ ստոր արարքը եւ ոչ մէկ կերպով կրնայ արդօրանալ ոչ Հայ եւ ոչ Պուլկար շրջանակներու մէջ:

ԵՐՈՒՍԵՂ ԹՈՒԼԱՅԱՆ
Վառնա, 13 մարտ 1901

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ի նպատակ Աղէքսանդրիոյ աղբարտարան ընկերութեան կողմէն արեւելեան երկրորդին զուտ հասոյթը եղած է 300 եգիպտական ոսկի: Նոյնպէս եւ ուրիշներ թեմաք կեանքին թէ Աղէքսանտրիոյ թաղապետութիւնը, իրենց եղած գիւմարին վրայ, իր վերջին նստին մէջ քուէներու միաձայնութեամբ տարեկան 50 եգիպտական ոսկիի նպատակ մը յատկացուցեր է Հայոց աղբ ընկերութեան:

— Եգիպտոսէն կիմացուի նաեւ թէ առաջնորդ Յովսէփ Եպիսկոպոս Ալփազեանի գէմ գանգատներ կան եղեր թէ միշտ ազնուապետական դատակարգին շուրջը կը դառնայ եւ կը մոռնայ հանրային գործերը եւ այս մտքը ալ հանրագրութիւններ կը պատրաստուին:

— Երուսաղէմէն տմենած տեղիկութեան մը համաձայն մինչեւ ցարդ 350 Հայ ուխտաւոր հասած է հին:

— Միւսիթարեան Միտրանութիւնը «Որբախնամ» հասոյթէն 300 ֆրանքի բոթին մը հանած է կիպրոսի Որբախնամ համար:

— Գանտիարի հայ գաղթականութիւնը հանգանակութեամբ մը 34 ֆր. 80 անթիմի գումար մը Հայկական խրկած է Գահիշէի Հայոց Որբախնամ ընկերութեան:

— Մանչեսթր լոկալ Պ. Ա. Ժամկոչեան նամակով մը խորհրդի Ամերիկեան Եփրատ Գոյէճի տնօրէն Տր. Կէյսի իմացուցած է թէ ինքը անձամբ տարեկան 250 լիրա նոյն Գոյէճին պիտի վճարէ 2000 լիրայի գումար մ'ալ ժողովի խրկելու եւ Անգլիոյ ու Մ. Նահանգաց մէջ յանձնաժողովներ կազմելու ձեռնարկած է:

Եփրատ Գոյէճին մէջ 1,100 աշակերտներ կուսանին:

— Մուշէն հասած տեղիկութիւններ հայ գիւղերու վիճակը շատ դէշ կը նկարագրեն: Անցեալները Դիւրդ մը գիւղերէն հայ ընտանիքի մը տանիքը ելլելով կը մօտենայ երգիքին եւ հակառակ տնեցոց ազալանքներուն ու պաղատանքներուն երգիքին վար կրակ ընել կ'սկսի եւ կը յաջողի ընտանիքին անդամներէն երիտասարդ մը սպաննել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը նոյն հաստատութեան Որբախնամ մէջ, որքան ձեռնարկ է ի նպատակ այն ա-

նօգ, անտէր մանուկներուն պատրաստուած սիկարի թուղթին սպառումը ալ աւելի շտեղծելու եւ այսպէսով հետզհետէ բազմանալու վրայ եզոյ երկսեռ որբերու, պատրաստութեան տմենօրեայ եւ բազմակողմանի պէտքերուն հասնելու համար, նորիս հրահանգած է մեզ այսուհետեւ սիկարի թղթերուն տուփը վաճառել երկու ֆր. 70 անթիմի փոխան 2,90 ի եւ խնդրած է տեղական թերթերու մէջ զայս ծանուցանել ի նպատակ ազգային սոյն մեծ հաստատութեան եւ լազմաթիւ պատասպանանքներու:

Աւելորդ է այս թղթին գնոյն վրայ եղած զեղչին հետ անգամ մ'ալ կրկնել տեսակին հինէն աւելի ազնուացած ըլլալը որ ծանօթ է ամեն գործածողներուն:

Տիգրան Պիպերեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մր. Ճոն Բոքֆէլլը—Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ «Կալի քաղաք» անունով ծանօթ այս տիեզերահոյակ արշի միլիոնատէրին, Եւրոպական թերթերու ըսածին համեմատ, օրական եկամուտն է եղեր 25,000 ոսկի, ամսական 750,000 իսկ տարեկան 9,000,000:

Սակայն միւսոյն ատեն այդ մեծանուն միլիոնատէրը բաւական ատենէ ի վեր կը տառապի եղբոր ստամոքսային անբուժելի անպիսի հիւանդութենէ մը, որ հազիւ թէ օրը քիչ մը կ'ախի իր եւ տունը կրնայ տնել այն ալ մեծ տանջանքներով եւ խեղճ գործաւորի մը կերածին ախր քաշելով:

— Եգիպտոս հրատարակուող «Բերամիտ» թերթին թղթակիցը պատմած է թէ Սոմալի քաղաքին մէջ մէկը Շէրիի դատարանը ներկայանալով դատաւորէն հետեւեալ կարգադրութեան վրայ կարծիք ուզեր է:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՅԵՐ [36]

(ՊԱՏԿԵՐ ՄԵ ՏԱԿԱՅԱՅԱՍԱՆԻ ԻՐԱՎԱՆ ԿԵԱՐԷՆ)

ԾԱ.

Մուռ Կրպօն, թրքական բիրտ ուժը իրեն նեցուկ ունենալով, հրէշօրէն իր քանդիչի դերը կատարելու կը հետամտէր, առանց խորութեան ու անխղճահարութեան տանջել ու կեղեքել կուտար ամեն անոնք որ, իր լրտեսական շահատակութեանց վերաբերմամբ ակնարկութիւն մը ընել համարձակէին:

Անոր աս պոգալի արարքը, Սահակի խմբակից ու զաղապարակից ընկերները տեսնելով խորապէս կը ցաւէին որ, ան զաղիւրդաւանի կեանքն արմատէն քնջելու պատահութիւնը քիչ մը կուշտանար: Հեղինկ զանուկներու պէս, կը համարէին, ու օրական կարգով, անոնցմէ ոմանք զանիկա կը լրտեսէին:

Օր մ'ալ. աս անպուշ դաւաճանը լրտեսելու կարգը Սահակու, Սիւսակի, ու Սմբատին եկած էր: Այդ օրը, ազոթարանը դեռ չբացուած, Մուռ Կրպօն տունէն դուռն ուղղակի դէպի դաշտ գիւմարէն, զիջերանց քաղաք երթալու եւ ո՛վ զիտէ ինչէր, զաւեր սարքերու համար: Երբ գիւղէն բաւական կը հեռանայ ան, Սահակ իր երկու ընկերներով կը

զիմարէն զայն ու վճռապէս անոր կը հրամայէ իրենց հետեւիլ:

Մուռ Կրպօն իր գլխին գալիք պատիժի ունեւորութենէն զարեւորած, անշուշտ կը հետեւի անոնց: Սիւսակն ու Սմբատը, հրացաններն ուսերնուն վրայ դրած առջեւէն Սահակ իր սուրը մերկացուցած ետեւէն ու Մուռ Կրպօն վայրագ ոգրագործի մը պէս մէջտեղէն, կը քալեն: Ազոթարանի մուտքն ու լոյս յուշիկ յուշիկ գեղա նոր կը ճգնէր: Գալտերու մէջ ոչ ոք չը կար, մատնիչը իր արդար դատաւորներու ճանկի մէջ, ձիւր ծոած լուռ ու մռնշտ անոնց կը հետեւէր:

Վերջապէս կերթան կը հասնին ան տեղը ուր պիտի կատարուէր այդ վատի մահուան դատաւճիւրը: Սահակ կը կեցունէ իր զինակիցները, ու ատ երեք ետեւում հայրենասէրները մերկ սուրերով կը չրջապատեն անխղճ դաւաճանը: Վայրկեան մը խոր լուռութիւն կը արիւնջէ Սահակի սիրուն սարքերն ու ձորերէն սուրացող առաւօտեան զով քամին Տիգրիսի քաղցր խոյից հետ, տարօրինակապէս կը յուզէ ու կ'ընթարականացնէ անոնց սրտերը: Հոն, ան զբախտի գետի եզրից, եկած էին գործադիրու ամենաարդար դատաւճիւր մը որ, իրենց Հայրենիքի ու ազգակիցներու վրկութեան ու վերածնութեան օգտին համար տրուած էր անոնց ընկերական մէկ ժողովի մէջ:

Սահակ, հերոս-կորիճի մը խորտանքով, իր սրի ծայրը, ատ վատ մատնիչի սրտին ուղղելով կըսէ. «Դո՛ւ, գարշելի մատնիչ, թու գործած բոլոր վատութիւններու ու հրէշութիւններու արդար պատիժը աս վայրկեանին, մեր ձեռքէն պիտի կը լիս. ալ հերիք է, թու անօրէնութիւններու չափը լեցուեցաւ ու մինչեւ երկինք բարձրացաւ:»

Սահակ, իր աս մէկ քանի յուզուած խօսքերը լինցեալուն պէս, իր ընկերներուն վերջին հրամանը կուտայ ու ատ երեք քաջերը, իրենց սրերը ան վատի ապականուած սրտի մէջ կը խրեն: Գաւառանը հրէշի մը ոռնոցով գետին կը փռուի. տղաքները տնոր պիղծ մարմինը յոշոտելով Տիգրիսի սրբութեան ալիքներու մէջ կը ձգեն, ու անոր ապականուած արիւնի հետքերը անհետացնել ետք, խաղաղ սրտով, աննշմարելի ճամբաներէ անցնելով գիւղ կը վերադառնան:

ԾԲ.

Գարգէն, Տէր Վահանի հետ, իր վարժապետութեան միջոցին, աշխատած էր, իր ծննդավայրի հայ կնոջ սրտի ու մտքի մէջ տպաւորել ազգայնութեան ու հայրենասիրութեան սուրբ դաղափարները, որոնք շինական պարկեշտ էկնոջ իտէալականութիւն մը կուտան:

Իր հրապարակային նպատակաւորար դասախոսութիւններու ընթացքին, Գարգէն, շատ անգամ, հինգերորդ դարու հայ կիներու նկարագրութիւնը հոգեկան ամենազօրեղ խանդավառութիւնով մը ըրած էր. ու ատ թեւադրիչ ազդեցութեան ներքեւ իրենց պիղի կիները զգալապէս առաջ մղած էր:

Զ. Պ. Նահապետեան
(Շարունակելի)

«Թէ կին մը կը սիրեմ որ բո-
րեկամներէս մէկուն կինն է : ան-
ալ, այսինքն իմ բարեկամս իմ
կնոջս համար մեծ սէր ունի . հե-
տեւորաւ համաձայնեցանք որ կի-
ներնս փոխանակենք . սակայն իմ
կինս յղի է , իսկ անորը ոչ . ասոր
փրայ բարեկամս իբր հատուցում
կ'ունենայ զոտ ինծի մատակ էչ
մ'ալ պիտի տայ :»

Գատաւորը խնդրով ալսեց .
կան և տարօրինակ կարգադրու-
թեան վրայ , մարդուկին յայտնա-
է որ այդ օրինակ կարգադրու-
թիւն մը անկարելի է :

ԿՈՉ

... Խմբագիր «Իրաւունք» լրագրոյ
Հանգեցք ներկայ կոչը անփոփոխ
հրատարակել .

Քանի մը օրէ ի վեր մէկ քանի դաշ
նակցականներ երբեմն ազգայիններէ
որոշ գումարներ կը պահանջեն յանուն
յեղափոխութեան :

Մենք թէեւ Ազգ. Ս. դատին աշ-
խատողներուն ամեն անգամ աջակցու-
թիւն ընել նուիրական պարտք ըմբո-
նած ենք , որուն մէջ թերահաւան ու-
ճիր կը համարինք . սակայն միեւնոյն
ատեն՝ ցաւ ի սիրտ նկատելով թէ մեր
այս նուիրական դատը վարելու խիստ
փափուկ պաշտօնը ստանձնող յեղա-
փոխ . կուսակցութեանց մէջ անհարկի
երկպառակութիւնը , եղբայրասպան
պայքարը եւ կուսակցականներէ ոմանց
յայտնի զեղծումները մեր դատի յաջո-
ղութեան յայտնապէս կը վնասեն .
կուգանք հրապարակաւ յայտարարել որ
մինք եւ մերինները սիրով պիտի վճա-
րենք , մեր կարողութեան չափով ,
եթէ այս երկպառակութիւնները միան
յամ ընդ միշտ մէջտեղէ վերցունին :

Ուստի կուսակցականք նախ վառնա-
լի եւ յետոյ անորով Պուլկարիոյ մէջ
հաւաքուելիք դրամները յանձնել տե-
ղական հորակազմ մարմնոյ մը . որ
բաղկացած ըլլայ նիւթապէս ու բարոյ
յապէս յայտնի ու յարգելի ազգայիններ
իւ . որ այդ գումարները իր մօտ ունեն
նալով , կոչ ընէ մեր յեղափ. կուսակ-
ցութեանց որ համաձայնութիւն մը գո-
յացնեն եւ հետագայում միացեալ դու-
րանքներով , ուրք դատին յաջողու-
թեանը աշխատին :

Կը յուսանք որ մեր արգարացի կու-
չը հասարակութեան , յեղ. կուսակցու-
թեանց եւ հարուստ գաւազաններէ հա-
ճելի պիտի թուի :

Արդ , կ'առաջարկենք որ Սուրբ դա-
տին նիւթապէս օգնելու միջոց ունե-
ցող ազգայինք փութան խորհրդակցել
եւ օգտակար ու վճռական տնօրէնու-
թիւն մը ընել :

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

12 մարտ 1901
Վառնա

ՀԱՎԱՍՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

—(—)

ԹԻԻՐԻՔԻԱ

Գուրգան Պայրամբնտա միւսլի-
մանյար թաւաֆնտան գուրգան
օլընաճագ գօյուլլարըն բէօստէքի
լէրի , հիւքիւմէթ թարաֆնտան
թափլանըուպ Հիւճաղ շիտէնտըֆէ-
րի մէսարիֆի մէնֆաւթընա սա-
թըլմասը Սուլթան էմր իթմիշ
տիր :

— Եագըն կիւնլէրտէ սէքիզ ա-
տէտ հարպ սէֆիւնէսի թամիր իշիւն
ճէնօվտաթի Սնաշուտօ ֆապրիգա
օրնա եօլանըւաճաղար :

— Եաի հարպ սէֆիւնէսիտէն
միւրէքքէպ վէ Ամիրալ ֆօրգէլէտ
տիւնին թաշթըր գօմանտաճընտա
պուլընան պիր իթալիա տօնանմա
սը թարապուլուզը դարպտա օս-
մանը սուլարընա կիթմիշ տիր :

— Օսմանլը օրտուսընը թանգիմ
իթմէք իշիւն եէնիտէն պիր թա-
գըմ Ալման զապըթլար Սթանպօ-
լա կէլմիշլէր :

ՄԱԿԵՆՈՆԻԱ

Մակեդոնիա տաքի ասկէրի ճէպ
հանէլէրինէ Սթանպուլտան քիւլի-
լէթի սիւսհ հօլլանըլը տըր :

— Մակեդոնիա տան բէք շօք
մուհաճիւր Պուլկարիա իթմիւս
իթմէքտէ տիրէր :

— Սէլանիկտէն . էճնէպի կազէ
թալարընա վէրիլէն մալիւմաթա
նաղարէն , Մակեդոնիա իսլամարը
պէյնիտէ հիտտէթ վէ խրիսթի
յանլարա , պախաւուտ Պուլկարիա
րա գարշը օլուն հըրս ֆէվզէլտաթ
տիր : Հէման հէր կիւն տէրտէսթ
ու հապա օլունան պուլկարիալըն
հիտապը եօգ տըր :

ՉԻՆ

Բէքինտէն վէրիլէն պիր թէլէկ
րաֆա նաղարէն . Չինտէ չիմտի
լիք հաղըր պուլընան Բուս ասկէր
լէրին մըգտարը 100,000 օլուպ .
Բուսիտ տէօվէթի եէնի ասկէրլէր
հօլլալուպ մըգտարը մէքէրիւս տըր
թըրմաղա գարաթ վէրմիշ տիր :

— Բուսիտ վէ Չին պէյնիտէ
Մանչուրիա իշիւն թանգիմ օլուն
մուշ շարթնամէնին պիր ան էվվէլ
Չին թարաֆնտան իմզալանմասը
իշիւն Բէյլիլի քէօրֆէլիտէ Բու-
սիտ պիր նիւմալիշտէ պուլընաճա-
ղը գանն օլընաճագտա օլտուղու թէ
լէկրաֆար պիւթիթիլլար :

— Եանկալտա Չինլիլէր թօփլա
նուպ Մանչուրիա շարթնամէսինին
լուղլընը թալէպ իտէր պիր պէյան
նամէ իմէքթաթօր ֆուանկ Սուլա
կէօնտէրմիշլէր :

— Մանչուրիա շարթնամէսինին
իմզալանմասը իշիւն Բուսիտ Չինի
թալիլի իթմիկի իւզրէ , տիւվէլլը
մուաղամայի էճնէպիլէ պիլ իթթի
ֆաթ Բուսիտա գարշը եէնիտէն
պիր բրօսթէսթօ իտէճէքէր
իմիշ :

ԱԼՄԱՆԻԱ

Իմէքթաթօր պիւսպիլիւն իյի
լէշմիշ տիր : Պու տէֆաւտա Պէր
լինտէ արապա իլէ կիտէր իքէն ,
արապասը պիր էլէքթրիշ արապա
սընա շարթիւպ էօլիւմտէն անճաք
գուրթուլմուշ օլտուղու էճնէպի կա
ղէթաթ հափաթիւթիւնտէն տիր :

ԻՆԿԻԼԹԵՐԱ

Գրալիշա վիքտորիանըն վէֆա
թը իլէ Գրալ Էտուարտըն ճիւլի
սիւնի բէսմէն թէպիլի իթմէք իշիւն
Հօնտրաւտան հէյլէթը մախուսա 8

լար եօլա շըգմագտա տըրլար :

— Գրալ վէ Գրալիշա ֆօրէնհա
կա (Տանիմարգա) կիթմէք իւզրէ
Ֆրանսանըն ֆալէ շէհրինէ շըգա
ճագլարը Բարիգալէն պիր թէլէկ
րաֆ պիւթիլլար :

ԻԹԱԼԻԱ

Մէճիլիսի վիւքէլա եէնի զըրհը
լար իմալի իշիւն 32 միլիոն Ֆրանք
թախսիւ իթմիշ տիր :

ՏԱԽԻԼԻՅԷ

Ֆէլի Բուէնս Ֆէրտինտա հաղ
բէթլէրի Ֆիլիպէտէն Սօֆիալա
ազտէթ իթմիշ տիր :

— «Պուլկարիա» նամ կաղէթա
նըն նէշրինի թէէմիլի իթմէք իւզ-
րէ Մ. Չանքով օն սէնէ միւտտէթ
լէ պիր շիրքէթ թէշթիլ իթմիշ
տիր : Իշպու շիրքէթի սէրմալէսի
50,000 ֆր. իմիշ :

ԻՐԱՆ

«Ֆրանքֆորթէր Չայթուկ» Ալ
ման կաղէթալըն պէյանընա նա
ղարէն , Թէհէրանտա (Աճէմ փալ
թախտը) գարըըզլըք գուհուր իթ
միշ տիր :

— Թէքրար իրանտան վէրիլէն
պիր թէլէկրաֆ . Սուլալար , Եահ
էպրօֆաւտան տէօնէլի պէրի իսլա
հաթ նամը իլէ միւնտիպէթսիզ
իճրաթթա պուլընլար տէյու ա
հալիլի Եահա գարշը ալապլանտըր
մաղա զայրէթ իթմէքտէ օլտուգ
լարը պիւթիլլար :

ԹՐԱՆՍԿԱՍԱ

«Տէլի Մէլ» կաղէթալը ,
Թրանսպալ ճուհուրիլէթի վէքի
լի Մ. Եալգըն Լարտ ֆիշնէրէ
Սուլհ իշիւն եէնի թէքլիֆաթտա
պուլընաղըն պէյան իտիլար :

— «Սէնգըրլ Նիւ» կաղէթալը
նըն պէյանընա նաղարէն , Սուլհ
իշիւն ինկըլթէրանըն թէքլիֆէրի
նի թէտգիթ իթմէք իւզրէ ումու
Պօէր Ժէնէրալլարը ֆէվզէլտաթ
պիր իճթիմաւտա պուլընմըշար իսէ
տէ էլան նէթիճէսի մալիւմ օլմա
մըշ տըր :

Մէշհուր Ժէնէրալ Պօթանըն պի
րաւէրի Ֆիլիք Պօթա Տարընպէզի
տէ պիր միւտարըպէ էսնասընտա
թէլէֆ օլտուղու կիպի , մէշհուր
Ժէնէրալըն իքի էվաւտտա եարա
լանմըշ տըր :

— Ժէնէրալ Տէվէգին Հալպըօն
տա պուլունաղը անլաշըլմըշ տըր :

ԲՈՒՍԻԱ

Ս. Բէթէրապուլի ինկիլիզ էլշի
սի խարիճիլէ նէղաթէթիւնէ կիտէ
բէք Գօնթ լամաւօրֆտան Մանչու-
րիա շարթնամէսինին պիր նիւսիւ
սինի թալէպ իթմիշ իսէտէ . Գօնթ
էլշիլին պու թալէպիլին բէտտ իթ
միշ տիր :

— Բուսիտա պու կիւնլէրտէ
վուգու պուլան շակիրտան նիւմա-
լիշլէրինտէն տալար , խարթուտա
8 քիշի եարալանմըշ վէ 136 քիշի

տէրտէսթ օլունուպ 24 տէ տրա
նըլաղտա իմիշ :

Մասքուտա 630 քիշի թալիլ
մուշ քի պուլարտան 517 իսի թա
լէպէ իմիշլէր : Պիր գաշ կիւն
սօնկրաւտա թէքրար 129 քիշի տա
հա եագալանըպ հապալարա աթըլ
մըշլար : Բէթէրապուլիտա իսէ
թուլթուլանլարըն մըգտարը 760
օլուպ պուլարտան 839 թալէպէ
377 իսի զըզ թալէպէ իմիշլէր :

Օտէսա վէ ֆիլէպէթի թէֆգի
ֆաթըն մըգտարը էլան մէճհուլ
գալմըշ տըր :

Իշպու նիւմալիշլէրտէ 20 փօ
լիս 8 գաղաք վէ էհալիտէն 18
քիշի իլէ 15տէ գատըն եարալան
մըշլար :

ՍՊԱՆԻԱ

Սպանիանըն վալաւտուիտ շէհ
րինտէ պէյիւնէք պիր միթիլի
իճրա օլունուպ հիւքիւմէթէ գար
շը նուլթլար սէյուլէնմիշ , վէ էհա
լի «Եաշասըն իսթիլալ» տէյու
պաղըրարաւագ ֆրանսալը մարշը
օլուպ , գրալիլիլէ զարշը եաղը
մըշ օլան «Մարսէլլէզ» շաղըր
մըշլար :

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Ա. Ա. Փափ . Ռուսոյոյ .— Ձեր
առջի հասցէն ճշդիւ իմացուցէք որ
շնչենք եւ նոր հասցէին դրկենք թեր
թերը :

Ա. Ռ. Ֆիլիպէ .— Խուճիլին գոնէ
երկու անգամներու իսկական ստորա-
գրութիւնները հարկաւոր են մեր քով
մնալու համար :

Լ. Գ. Գալազըլ .— Ձեզ նման ու-
րիւ մէկ քանի բաժանորդներ ալ ի-
րենց պարտքին վճարման համար մին
չեւ Չատիկ միջոց խնդրած են .
այս պատճառաւ ցարդ չվճարողներուն
անուանց ցանկին հրատարակութիւնը
յիտաճեցիւք մինչեւ ապրիլի սկիզբը :

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

(ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ)

Եալընըզ լէթալիֆ վէ ֆէնի
էյլէնճէլէրտէն պահս իտէր իշպու
քիթապ բէյաթիլլէ Նէշր . օլունա-
ղա պաշլաւմըշ տըր : 20 ճիւլի (160
սահիֆէ) հալի պուլունաճագ պէ
հէր ճիւլտին ապօնէ պէտէլի Պուլկա
րիա իշիւն 2 Ֆր. վէ խարիճ իշիւն
2 1/2 ֆր. տըր : Հէր հաթթա 8
սահիֆէտէն իպարէթ պիր ճիւլ
նէշր օլունաճագտա տըր :

Ապօնէ օլմագ արգու իտէլլէր ա
թիւթիւ տարէսէ միւրաճաւթ իթ
մէլի տիր :

Ատրես

Տիրան ֆախաղաւն

Երլարդ քապիւս վառնա
(Պոշկարիա)

Տեղա գտնուող հայ կին մը թա-
խանապին կը խնդրէ իր գաւկէն .
Թալիք Եահիւնան միջանաւակ , ու-
ւալանի 27 տարեկան որ իր ուր գտ-
նուիլը իմացնէ : Կը կարծուի թէ Պօս-
տոն կը գտնուի , Պօստոնի—Ամերիկա-
յի հայերը եթէ յիշեալ երիտասարդին
վրայ տեղեկութիւն մը տան , մեծ
բարիք մը բրած պիտի ըլլան :

Отговорникъ Н. Драгулевъ
П. «Взаимность» Варна